600.0020.08.02.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 փետրվարի 2017 թվականի №20Ա
քաղ. Երևան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի №47Ա ԵՎ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 20-Ի №186Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 13-րդ հոդվածի 2-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, 78-րդ հոդվածի 1-ն և 3-րդ մասերը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 13-ի №169Ն, 2011 թվականի մայիսի 11-ի №231Ն որոշումները և հաշվի առնելով «Ղ-Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության 2017 թվականի հունվարի 19-ի №MH/L170071/1.0/RY գրությունը (հանձնաժողովում մուտքագրվել է 2016 թվականի հունվարի 20-ին)՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Երկարաձգել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի փետրվարի 16-ի «Ղ-Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերությանը ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №47Ա որոշմամբ (այսուհետ՝ №47Ա որոշում) «Ղ-Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման №0067 թույլտվության գործողության ժամկետը՝
    1) №47Ա որոշման 1-ին կետում «10 տարի» բառերը փոխարինելով «մինչև 2019 թվականի նոյեմբերի 4-ը» բառերով.

2) №47Ա որոշման հավելվածի՝ №0067 թույլտվության պայմանների 2.2 կետում «տրվում է 10 տարի ժամկետով» բառերը փոխարինելով «գործում է մինչև 2019 թվականի նոյեմբերի 4-ը» բառերով:

2. Երկարաձգել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի ապրիլի 20-ի «Ղ-Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերությանը ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №186Ա որոշմամբ (այսուհետ՝ №186Ա որոշում) «Ղ-Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման №0123 թույլտվության գործողության ժամկետը՝

1) №186Ա որոշման 1-ին կետում «10 տարի» բառերը փոխարինելով «մինչև 2019 թվականի նոյեմբերի 4-ը» բառերով.

2) №186Ա որոշման հավելվածի՝ №0123 թույլտվության պայմանների 2.2 կետում «տրվում է 10 տարի ժամկետով» բառերը փոխարինելով «գործում է մինչև 2019 թվականի նոյեմբերի 4-ը» բառերով:

3. Ուժը կորցրած ճանաչել՝

1) №47Ա որոշման հավելվածի՝ №0067 թույլտվության պայմանների 3.1 կետի «բ», «ե», «զ», «ը», «ժ» ենթակետերի աղյուսակների 8-րդ և 39-րդ տողերը.

2) №186Ա որոշման հավելվածի՝ №0123 թույլտվության պայմանների 3.1 կետի 2-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ և 10-րդ ենթակետերի աղյուսակների 3-րդ, 59-րդ, 66-րդ, 75-րդ և 76-րդ տողերը:

4. Սույն որոշման 1-ին կետը ուժի մեջ է մտնում 2017 թվականի փետրվարի 16-ից, 2-րդ կետը՝ 2017 թվականի ապրիլի 20-ից, իսկ 3-րդ կետը՝ 2017 թվականի հունվարի 20-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
8 փետրվարի 2017 թ.